ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 11 >> սեպտեմբերի 2015թ. N 73 - Ա

ք. Արմավիր

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի N 1094-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով դասընթացներին մասնակցելու նպատակով.

կ ա ր գ ա դ ր ում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ (63-2.1-1) Վարազդատ Մկրտչյանին 2015 թվականի սեպտեմբերի 15-ից սեպտեմբերի 25-ը ներառյալ, գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացներին:
2. Վարազդատ Մկրտչյանի վերապատրաստման մեջ գտնվելու ժամանակահատվածում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Աբրահամ Մարտիրոսյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ.Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2015 թվականի սեպտեմբերի 15-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ